ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՏՋՀ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2025/1

ք. Երևան «28» 03 2025թ.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրենի Սարգիս Բաղինյանի, ովքը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Լիլանարմ» ՍՊԸ-ի տնօրեն Նարեկ Պողոսյանի, ով գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **«Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին հատկացված ք. Երևան, Ռոստոմի փողոց 30, շինություն 243 հասցեում գտնվող տարածքի վերանորոգում»** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 30 օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով. աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների **100 տոկոսը** կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխությանև այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **առնվազն 365 օրացուցային օր:** Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 30 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 61,384,040 (վաթսունմեկ միլիոն երեք հարյուր ութսունչորս հազար քառասուն)ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն, որից 10,230,673.3 (տաս միլիոն երկու հարյուր երեսուն հազար վեց հարյուր յոթանասուներեք և երեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական

համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[1] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

N	Խախտումը	Պատասխանատվությունը
1	Շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը չկատարելը	նախահաշվային գնի 0,05 % չափով
2	Տեխնիկական անվտանգության նորմերի չպահպանելը	նախահաշվային գնի 0,1 % չափով
3	Սանիտարահիգիենիկ և բնապահպանական նորմերի չպահպանելը	նախահաշվային գնի 0,1 % չափով

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են

---

[1] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

«Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում» լիցենզիա, ըստ հետևյալ ոլորտի

Չափաբաժինների համարները	*Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները).*
1	*2*
1	**<u>Շինարարության իրականացում,</u> 3-րդ և բարձր դասի լիցենզիա, ներդիրով** ✓ բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ **3-րդ և բարձր կարգի հավաստագիր** ✓ ջրամատակարարում և ջրահեռացում (ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր, հիդրոմելիորացիա) **3-րդ և բարձր կարգի հավաստագիր** ✓ էլեկտրամատակարարում (էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցեր, էլեկտրամատա-կարարման համակարգեր, ֆոտովոլտային և հողմաէներգետիկ կայաններ) **3-րդ և բարձր կարգի հավաստագիր** ✓ ջերմագազա-մատակարարում և օդափոխություն (օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման համակարգեր, ջերմամատակարարաման և գազամատակարարաման համակարգեր) **3-րդ և բարձր կարգի հավաստագիր** ✓

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31 ՀՎՀՀ՝00846441 Հ/Հ՝ Կենտրոնական գանձապետարան Գործադիր տնօրեն Սարգիս Բաղինյան /ստորագրություն/ Կ.Տ	«Լիլանարմ» ՍՊԸ Հասցե՝ Ք.Երևան, Նուբարաշեն 12փ.4շ բն 6 ՀՎՀՀ՝ 00433589 Հ/Հ՝ 220613330251000 Բանկ՝ «ԱԿԲԱԲԱՆԿ» ԲԲԸ Տնօրեն Հ.Պողոյան /ստորագրություն/ Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

«28» 03 Հավելված թիվ 1
2025թ. կնքված
ՀՏՋՀ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2025/1 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

« Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին հատկացված ք. Երևան, Ռոստոմի փողոց 30, շինություն 243 հասցեում գտնվող տարածքի վերանորոգում»

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

NN	Նկարագրություն	Չ/մ	քանակ	Միավորի գին (դրամ)			Ամբողջի գին
				նյութեր	կատարում	ընդամենը	
			a	b	c	b+c	a*(b+c)
1	**Քանդման աշխատանքներ**						**31,095**
1	Դռների ապամոնտաժում	մ2	5.00	1771.74		1,771.74	8,859
2	միջնորմների և պատի շարերի քանդում բացվածքի բացում	մ2	5.00	1239.77		1,239.77	6,199
3	Խեցեսալե հատակի քանդում	մ2	10.00	650.45		650.45	6,505
4	Շին. աղբի և ավելորդ բնահողի , բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում մինչև 13կմ	ï	2	4766.62		4,766.62	9,533
2	**Շինարարական աշխատանքների իրականացում**						**8,957,560**
1	Միջնորմների կառուցում 12 մմ հրակայուն գիպսոստվարաթղթե սալերով ձայնամեկուսիչ շերտով <<երկկողմանի>> պրոֆիլների հետ միասին	մ2	601	9000.99		9,000.99	5,409,595
2	Ձայնամեկուսիչ հանքային բամբակի 10մմ հաստությամբ 20-25 կգ/խմ խտությամբ արժեքը /տեղադրման աշխատանքը մտած է միջնորմների կառուցման մեջ/	մ3	60.1	32499.83		32,499.83	1,953,240
3	Ներքին դռների շրջանակում մետաղական ուղղանկյուն խողովակներոի տեղադրում	տն	1.35	109244.98		109,244.98	147,481
4	խողովակ 80x40x3մմ արժեքը	գմ	260.00	2442.61		2,442.61	635,079
5	Մետաղական թիթեղ 150x150x5մմ,	ï·	80	728.61		728.61	58,289
6	Մետաղական տարրերի հակակոռոզիոն լաքապատում	մ2	70.50	1610.78		1,610.78	113,560
7	Միջնորմերի կառուցում թեթեւաբետոնե բլոկներից 10սմ հաստությամբ	մ2	26.00	4464.02		4,464.02	116,065
8	Միջնորմների իրականացում թեթեւաբետոնե բլոկերից 20սմ հաստությամբ	մ3	13	29381.63		29,381.63	381,961
9	Շարվածքի ամրանավորում	տ	0.1739	89682.31		89,682.31	15,594
10	Ամրան Φ 12A500C	տ	0.070875	371758.94		371,758.94	26,348
11	Ամրան Φ 6A240	տ	0.1030	377843.52		377,843.52	38,920
12	Դյուբել M10 L = 110մմ	հատ	420.00	146.26		146.26	61,429

3	**Բացվածքներ**						**24,084,446**
1	Այլումինե բլոկով դուռ, 60մմ հաստ., ջերմակամուրջով, ապակեփաթեթով 4+4մմ, պրոֆիլ (արտերկիր)	մ2	15.00	123795.71		123,795.71	1,856,936
2	Այլումինե դռնով վիտրաժային միջնորմի իրականացում 60մմ ապակեփաթեթով 6+6մմ ներառյալ դռան ֆուռնիտուրան	մ2	155.0	125949.11		125,949.11	19,522,112
3	ՄԴՖ-ից դռների տեղադրում,	մ2	57.65	46927.99		46,927.99	2,705,399
4	**Ներքին հարդարման աշխատանքներ**						**5,501,755**
1	Շեպերի հարդարող մետաղական անկյունակների տեղադրում	·Ù	450.00	351.79		351.79	158,306
2	<<Ամստրոնգ>> տիպի կախովի առաստաղի քանդում և վերատեղադրում	մ2	300.00	2583.56		2,583.56	775,068
3	Պատերի եւ շեպերի ներկում լատեքսային ներկով, բարելավված որակի, ծեփամածկմամբ	մ2	2150	1522.04		1,522.04	3,272,386
4	Պատերի սվաղում գիպսոնիտե շաղախով	մ2	85	3617.65		3,617.65	307,500
5	Պատերի սվաղում ց/ավազային շաղախով բարելավված որակի	մ2	67.00	2398.79		2,398.79	160,719
6	Պրեսգրանիտե շրիշակների տեղադրում՝ 10 սմ	գմ	365.00	1305.41		1,305.41	476,475
7	Պատերի երեսապատում հախճասալով	մ2	52.00	6755.80		6,755.80	351,302
5	**Այլ աշխատանքներ**						**3,814,331**
1	Օդորակիչների ձեռքբերում և տեղադրում	կ-տ	12.0	13156.48		13,156.48	157,878
2	Օդատար ցինկապատ թիթեղից	մ2	82	9040.53		9,040.53	741,323
3	Գալավարագույրների տեղադրում	մ2	212.0	10969.79		10,969.79	2,325,595
4	Օդափոխության արտածման ճաղաշար 150x150	հատ	20.0	4351.52		4,351.52	87,030
5	Կանալային օդամղիչ 100 Վտ հզորությամբ 220 Վ /ներառյալ գոֆրա խողովակ/	կ-տ	20.0	25125.21		25,125.21	502,504
6	**Ջրամատակարարման ցանց**						**357,195**
1	Պոլիպրոպիլենե խողովակներ տեղադրում փորձարկումով, լվացում և ախտահանում d=25մմ , dպ20 ներառյալ ձևավոր մասերը	գմ	42.0	2961.66		2,961.66	124,390
2	Պոլիպրոպիլենե խողովակներ տեղադրում փորձարկումով, լվացում և ախտահանում d=20մմ,, dպ15 ներառյալ ձևավոր մասերը	գմ	25.0	3932.20		3,932.20	98,305
3	Գնդային փական dպ=20,P=1ՄՊա	հատ	3.0	5808.79		5,808.79	17,426
4	Գնդային փական	հատ	12.0	5646.43		5,646.43	67,757

	dպ=15,P=1ՄՊա						
5	Ծորակ լվացարանների համար	Ї-ї	3.0	12115.75		12,115.75	36,347
6	Ճկուն խողովակ զուգարանակոնքի լվացման տակդիրի համար DN=15,L=0.5մ	կ-տ	3.0	2193.96		2,193.96	6,582
7	Միացում գոյություն ունեցող խողովակաշարին,	ї»Õ	1	6387.39		6,387.39	6,387
7	**<u>Կոյուղու ցանց</u>**						**422,739**
1	Կոյուղու պոլիէթիլենային խողովակների տեղադրում , d110 մմ /հիդրավլիկ փորձարկումով/	գմ	20.0	3105.87		3,105.87	62,117
2	Կոյուղու պոլիէթիլենային խողովակների տեղադրում , d 50մմ /հիդրավլիկ փորձարկումով/	գմ	12.0	1701.74		1,701.74	20,421
3	Կոյուղու պոլիէթիլենային խողովակների ձևավոր մասեր d110	հատ	15.0	772.28		772.28	11,584
4	Կոյուղու պոլիէթիլենային խողովակների ձևավոր մասեր , d 50	հատ	20.0	400.76		400.76	8,015
5	Ուղղանկյուն խեցե լվացարան շշաձև սիֆոնով	հատ	3.0	38068.16		38,068.16	114,204
6	Զուգարանակոնք թեք թողարկով ցածր տեղակայված լվացման տակդիրով	հատ	3.0	68799.09		68,799.09	206,397
8	**<u>Ներքին էլեկտրալուսավորության ցանց</u>**						**6,420,352**
1	Պլաստմասե էլ.վահանակ 12 ավտոմատ անջատիչի համար, տեղադրվում է պատի խոռոչում, որի մեջ տեղադրվում են մուտքային եռաֆազ 25Ա (1հատ) և ելքային 25Ա միաֆազ (5 հատ),16Ա միաֆազ (4 հատ), ավտոմատ էլ. անջատիչներ	լրակազմ	3	75236.39		75,236.39	225,709
2	Լուսադիոդային (LED) լուսատու 35-40վտ հզոր. 3400-3600լմ լուսային հոսքով, 3900-4000կ գունային ջերմաստիճանով, IP20-23 պաշտպանվածության աստիճանով: /կամ համարժեք/	լրակազմ	230	14552.30		14,552.30	3,347,029
3	Խրոցակի վարդակ հողանցման հպակով տեղադրումը փակ պատի մեջ, 220վ, 16Ա	հատ	220	2084.97		2,084.97	458,693
4	Միաստեղ էլ.անջատիչ, տեղադրումը փակ, պատի մեջ, 220վ, 6Ա	հատ	45	1807.00		1,807.00	81,315
5	Երկաստեղ էլ.անջատիչ, տեղադրումը փակ, պատի մեջ, 220վ, 10Ա	հատ	6	2732.79		2,732.79	16,397

6	Տուփ անջատիչների և պատի մեջ տեղադրվող վարդակների համար	հատ	271	219.40		219.40	59,457
7	Բաժանիչ տուփ փակ լարանցման, էլ.լուսավորության ցանցերի համար	հատ	25	292.53		292.53	7,313
8	Պղնձե հաղորդալար՝կԹ-3 3x(1x4)մմԱ խմբային (չՐցտտՏՉօպ) գծերի համար:	գմ	1200	632.91		632.91	759,492
9	Պղնձե հաղորդալար՝, կԹ-3 3x(1x 2.5)մմԱ էլ.լուսատուների և խրոցակային վարդակների սնման համար:	գմ	1800	525.94		525.94	946,692
10	գոֆրե խողովակ	գմ	1100	471.14		471.14	518,254
9	**Սարքավորումներ**						**1,563,893**
1	Օդորակիչների ձեռքբերում և տեղադրում	հատ	12.0	130324.40		130,324.40	1,563,893
						Ընդամենը	**51,153,367**
						ԱԱՀ 20%	**10,230,673**
						Ընդհանուրը	**61,384,040**

Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ ք. Երևան, Ռոստոմի փողոց 30, շինություն 243 հասցեում :

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ 00846441
Հ/Հ
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն

Սարգիս Բարիկյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Լիլանարմ» ՍՊԸ

Հասցե՝ Ք.Երևան, Նուբարաշեն 12փ.4շ բն 6

ՀՎՀՀ՝ 00433589
Հ/Հ՝ 220613330251000
Բանկ՝ «ԱԿԲԱԲԱՆԿ» ԲԲԸ
Տնօրեն

Ն. Պողոյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված թիվ 2
«28» 03 2025թ. կնքված
ՀՏՋՀ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2025/1 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
« Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին հատկացված ք. Երևան, Ռոստոմի փողոց 30, շինություն 243 հասցեում գտնվող տարածքի վերանորոգում»
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	**Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին հատկացված ք. Երևան, Ռոստոմի փողոց 30, շինություն 243 հասցեում գտնվող տարածքի վերանորոգում**	*Պայմանագրի կնքման պահից*	***30 օր***
ԸՆԴԱՄԵՆԸ			***30 օր***

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝ 00846441
Հ/Հ՝
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Սարգիս Բաղինյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Լիլանարմ» ՍՊԸ
Հասցե՝ Ք.Երևան, Նուբարաշեն 12փ.4շ բն 6

ՀՎՀՀ՝ 00433589
Հ/Հ՝ 220613330251000
Բանկ՝ «ԱԿԲԱԲԱՆԿ» ԲԲԸ
Տնօրեն
Ն.Գոռոյան
/ստորագրություն/
Կ.Տ

«28» 03 *Հավելված N 3*
2025թ. կնքված
ՀՏՋՀ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2025/1 ծածկագրով պայմանագրի

Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին հատկացված ք. Երևան, Ռոստոմի փողոց 30, շինություն 243 հասցեում գտնվող տարածքի վերանորոգում »

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45461100/1	Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ	...	...	...	61,384,040	61,384,040	61,384,040	61,384,040	61,384,040	61,384,040	61,384,040	61,384,040	61,384,040	61,384,040

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն

Սարգիս Բաղինյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Լիլանարմ» ՍՊԸ

Հասցե՝ Ք.Երևան, Նուբարաշեն 12փ.4շ բն 6

ՀՎՀՀ՝ 00433589
Հ/Հ՝ 220613330251000
Բանկ՝ «ԱԿԲԱԲԱՆԿ» ԲԲԸ
Տնօրեն

Լ.Պողոյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված թիվ 4
« » 2025թ. կնքված
ՀՏՋՀ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2025/1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն